ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19 Հեռ.՝ (+37410) 54-78-95 Ֆաքս՝ (+37410) 54-78-94 էլ.փոստ՝ araratbank@araratbank.am

. Երևան

Կոդ: ՈՐԽ0102 – N 11/01L
Դաս: ՀՊ
«09» սեպտեմբերի 2019թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 84-ի 1-ին մասի բ)-ից դ), ժբ) և իե) կետերը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 21^6-ի 1-ին մասի բ), ժ) և ի) կետերը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրության 12.1. կետի բ) և իզ) ենթակետերը՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Հրավիրել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով՝ (այսուհետ՝ Ժողով) 2019 թվականի սեպտեմբերի 27-ին՝ որոշումների ընդունման հեռակա քվեարկության (հարցման) եղանակով:
2. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օր սահմանել 2019 թվականի սեպտեմբերի 09-ը:
3. Որպես ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ 2019 թվականի ֆինանսական գործունեության արտաքին աուդիտն իրականացնող անձ Ժողովի հաստատմանը ներկայացնել «ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲԸ աուդիտորական կազմակերպությանը և հաստատման դեպքում վճարման չափ սահմանել 14,400,000 ՀՀ դրամ՝ ներառյալ հարկերը:
4. Հաստատել Ժողովի օրակարգը՝ համաձայն Հավելված 1-ի:
5. Ժողով հրավիրելու մասին բաժնետերերին ծանուցել պատվիրված նամակներ ուղարկելու միջոցով:
6. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերին տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցանկը՝ համաձայն Հավելված 2-ի:
7. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերին տեղեկացնել, որ սույն որոշման 6-րդ կետով հաստատված ցանկում ընդգրկված նյութերին կարող են ծանոթանալ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ վարչական շենքում (ք.Երևան, Պուշկինի 19), ինչպես նաև համացանցի Բանկի տնային էջում (www.araratbank.am):
8. Հաստատել օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկների ձևը՝ համաձայն Հավելված 3-ի:
9. Ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ լրացված քվեաթերթիկների ընդունումն ավարտել 2019 թվականի սեպտեմբերի 27-ին:
10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Խորհրդի նախագահ Արզիկ Սուվարյան

Իսկականի հետ համապատասխան է՝
Աշխատակազմի ղեկավար Մ.Ուզունյան

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	Որոշում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով հրավիրելու մասին	Կոդ: ՀՎԾ/ՈՐԽ0102 – 01 Դաս: ՀՊ Ամսաթիվ: «09» սեպտեմբերի 2019թ.

Հավելված 1

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2019 թվականի սեպտեմբերի 27-ին կայանալիք ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի

1. Որպես ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության 2019 թվականի ֆինանսական գործունեության արտաքին աուդիտն իրականացնող անձ «ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲԸ աուդիտորական կազմակերպությանը հաստատելու մասին:
2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության կանոնադրությունը փոփոխելու և նոր խմբագրությամբ հաստատելու մասին:

Հավելված 2

Ց Ա Ն Կ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերին տրամադրվող տեղեկությունների և նյութերի

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ 2019 թվականի ֆինանսական գործունեության արտաքին աուդիտն իրականացնելու համար ներկայացված ընկերության վերաբերյալ տեղեկություններ:
2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ իրավաբանական հասցեի փոփոխության կապակցությամբ կանոնադրության 1.10. կետը փոփոխել և շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրությունը հաստատելով նոր խմբագրությամբ.

«1.10. Բանկի իրավաբանական հասցեն է՝ Երևան, Կենտրոն, Բուզանդի փողոց, 87-րդ շենք, թիվ 85:»:

3. Ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկը: